Ինքն կը պատմէ շարունակելով իր գիրը.

«Ի թուականիս Հայոց ՌԾԱ (=1602) մայիս ԻԹ եկեալ հասի ի Կիլիկեցւոց գաւառս. ի դըղեակն, որ կոչի Վահկայ, զի անդ էր ամբայնոց կաթողիկոսարանի, եւ ի տեսանել զմիմեանս ոչ սակաւ ուրախութիւն եղև մեզ և այլ քըրիստոնէից, և եղև մնալ մեզ անդ ԼԱ օր, մայիսի ԻԹ օրէն մինչև ի յունիսի ԻԸ օրն, և ժողովեցան առ անարժանութիւնս իշխանազունք և ամենայն գլխաւորքն ժողովրդեան տանս Կիլիկեցւոց և աղաչէին՝ վասն Աստուծոյ ուղիղ դատաստան արա ասելով, ըստ կանոնաց և ըստ հայրենի հրամանաց և աւանդութեանց տանս Հայոց»։

Գրիգոր Կեսարացի իբր գործնական մարդ, ինչպէս են առհասարակ բոլոր կեսարացիք, անշուշտ եպիսկոպոսութիւնը ձեռք բերելու համար «ետու ձեռագիր վկայական ի ձեռս նոցա» կ'ըսէ, հաստատելու համար Կիլիկիոյ աթոռին օրինականութիւնը և ընդհանրականութիւնը։ Անիկա կը վկայէ թէ՝

«Տուն Կիլիկեցւոց հաստատութեամբ ունի զաթոռ կաթուղիկոսութեան մինչև ցայժմ և է այժմ նորընծայ կաթուղիկոս Տէր Յովհաննէս, որպէս և մեք ձեռնադրեցաք և տուաք զվկայական թուղթս ի ձեռն նորա, որ և հնազանդքն այսմ աթոռոյս օրհնեսցին յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա և ի մէնջ, ամէն։ Իսկ անհնազանդքն և հակառակողքն և թշնամիքն